ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը).

Վահե Հովհաննիսյան, ՀՀ ֆինանսների նախարար

2. Գործուղման վայրը և ժամկետը.

Ք. Աբու Դաբի (Արաբական Միացյալ Էմիրություններ), 2025 թվականի ապրիլի 7-ից մինչև ապրիլի 9-ը

3. Հրավիրող կողմը՝

Արաբական Միացյալ Էմիրությունների էկոնոմիկայի նախարարություն

4. Գործուղման նպատակը՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի՝ ս.թ. ապրիլի 7-ից 9-ը ներառյալ ք. Աբու Դաբի (Արաբական Միացյալ Էմիրություններ) գործուղումը պայմանավորված է եղել «Գլոբալ ներդրումների ապագայի քարտեզագրում. գլոբալ ներդրումային լանդշաֆտի նոր ալիքը, դեպի նոր հավասարակշռված համաշխարհային կառուցվածք» խորագրով 14-րդ համաշխարհային տարեկան ներդրումային համաժողովին այսուհետ՝ Համաժողով) մասնակցելու անհրաժեշտությամբ:

Նշյալ համաժողովը համաշխարհային ներդրումների ոլորտում կարևորագույն իրադարձություններից է: Վերջինիս ընթացքում քննարկումներ են ծավալվել համաշխարհային ներդրումների ապագա ուղղությունների, դրանց աշխարհագրության, ռազմավարական գործընթացների, ոլորտային նորարարությունների, ներդրումների միջոցով ձեռներեցության խթանման, օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ներգրավման մեխանիզմների, նոր ֆինանսական գործիքների, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների վերաբերյալ:

Համաշխարհային տարեկան ներդրումային համաժողովին տարբեր երկրների լայն ներգրավվածությունը ներդրումների ոլորտում ունեցած դերն ու նշանակությունը տարբեր

երկրների համար համապատասխան հարթակ են ստեղծում իրենց ներդրումային միջավայրի բարելավման, միջազգային առևտրում աշխարհագրական նոր ուղղություններ գործարկելու պատրաստակամության մասին հայտնելու և պետության ներուժը համաշխարհային հանրությանը ներկայացնելու համար:

Հիշյալ համաժողովին մասնակցությունը նպատակահարմար է եղել նաև ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրում ՕՈՒՆ-ների առնչությամբ ցուցանիշների լավարկման թիրախավորման, միջազգային առևտրի խթանման տեսանկյունից:

5. Քննարկված թեմաները՝

- Օտարերկրյա ուղղակի ներդրումներ
- Համաշխարհային առևտուր և մատակարարման շղթաներ
- Համաշխարհային արդյունաբերություն՝ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ
- «Ապագայի քաղաքներ»
- Թվային տնտեսություն
- «Ապագա» ֆինանսներ
- Ձեռնարկատիրություն

6. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված և քննարկված հարցեր.

Կայացել է ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի հանդիպումը Աբու Դաբիի ֆոնդային բորսայի խմբի գլխավոր գործադիր տնօրեն Աբդուլա Սալեմ Ալնուայմինի հետ:

ՀՀ նախագահի գլխավորած պատվիրակության կազմում Նախարարը մասնակցել է նաև օրակարգով սահմանված մի շարք այլ հանդիպումների:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովի ընթացքում փաստաթղթերի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի և Աբու Դաբիի ֆոնդային բորսայի խմբի գլխավոր գործադիր տնօրեն Աբդուլա Սալեմ Ալնուայմինի հանդիպման ընթացքում

քննարկվել են երկկողմ համագործակցության հնարավորությունները, այդ թվում՝ ֆինանսական շուկաների ընդլայնմանն ու նոր ներդրումների խթանմանն առնչվող հարցեր:

Նախարար Հովհաննիսյանը ներկայացրել է ընթացիկ տնտեսական բարեփոխումները և երկրի ֆինանսական համակարգի զարգացման առաջնահերթությունները: Աբու Դաբիի ֆոնդային բորսայի ներկայացուցիչները շահագրգռվածություն են հայտնել Հայաստանի ֆինանսական շուկաների հնարավորությունների և հեռանկարների առնչությամբ:

Վահե Հովհաննիսյանը կարևորել է Հայաստանի ֆոնդային բորսայի անդամակցումը Աբու Դաբիի «Թաբադուլ» բորսայական թվային հաբին՝ հույս հայտնելով, որ այն մեծապես կնպաստի միջազգային ներդրումային հնարավորությունների ընդլայնմանը՝ ապահովելով ռազմավարական հնարավորություններ դեպի նոր շուկաներ և ընդլայնելով հասանելիությունը ներդրումներին:

9. Ստորագրություն, ամսաթիվ.

ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

14.04.2025թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. **Մարմնի անվանումը՝**

ՀՀ ֆինանսների նախարարություն

2. **Գործուղման մասին իրավական ակտի համարը՝**

ՀՀ վարչապետի՝ 2025թ. մարտի 24-ի թիվ 236-Ա հրաման

3. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝**

Վահե Հովհաննիսյան, ՀՀ ֆինանսների նախարար

4. **Գործուղման վայրը՝**

ք. Աբու Դաբի (Արաբական Միացյալ Էմիրություններ)

5. **Գործուղման ժամկետները՝**

2025 թվականի ապրիլի 7-ից մինչև ապրիլի 9-ը

6. **Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝**

ՀՀ պետական բյուջե և հրավիրող կողմի միջոցներ

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

գիշերավարձ

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը.

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*).

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

<u>բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացիկատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն.</u>

Ծախսի տեսակը		*Անուն, ազգանուն 1*	*Անուն, ազգանուն 2*	*Անուն, ազգանուն 3*	*Անուն, ազգանուն …*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)	Վահե Հովհաննիսյան				X
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	-				X
Գիշերա-վարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	178 ԱՄՆ դոլար				
	Վճարը 1 օրվահամար (դրամ)	69615,8				
	Օրերի քանակը	3				
	Ընդամենը (դրամ)	125 308				
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	129 ԱՄՆ դոլար				
	Վճարը 1 օրվահամար (դրամ)	50451,9				
	Օրերի քանակը	4				
	Ընդամենը (դրամ)	201 808				
Այլ ծախսեր	Հակահամաճա-րակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար					
	Այլ ծախսեր (*նկարագրել*)					
Ընդամենը ծախսեր (դրամ)		327 116				

1$ = 391.10 դրամ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ

ԱՐԱԻԿ ԵՍԱՅԱՆ

2025-04-17 18:36:40 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից